

**Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2020-2021 ուստարի)  
10-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)**

**ա) Հայոց պատմություն (15 միավոր)**

1. Ե՛րբ է Տիգրան Մեծը հպատակեցրել Վիրքն ու Աղվանքը. 0,5 մ.  
ա/ Ք. ա. 92 թ. բ/ Ք. ա. 87 թ.  
գ/ Ք. ա. 94 թ. դ/ Ք. ա. 84 թ.
2. Ո՛վ է հիմնադրել Թեյշեբաինի քաղաքը. 0,5 մ.  
ա/ Արգիշտի 1-ին բ/ Սարգուրի 2-րդ  
գ/ Ռուսա 2-րդ դ/ Ռուսա 1-ին
3. Որտե՞ղ է գտնվում պալեոլիթյան նշանավոր բնակատեղի Ազոխի քարանձավը. 0,5 մ.  
ա/ ԼՂՀ Ասկերանի շրջան բ/ ԼՂՀ Մարտունու շրջան  
գ/ ԼՂՀ Մարտակերտի շրջան դ/ ԼՂՀ Հադրութի շրջան
4. Հայոց ո՞ր արքան է պատասխանել հակառակորդ պետության առաջնորդին հետևյալ խոսքերով. «Ես ազատության էի ձգտում, քանզի լավ էի համարում, որ ինքս ազատ լինեմ և որդիներիս ազատություն թողնեմ». 0,5 մ.  
ա/ Երվանդ 1-ին բ/ Երվանդ 4-րդ  
գ/ Տիգրան Երվանդյան դ/ Երվանդ 3-րդ
5. Ինքնուրույն գործող կամ մարմնի մեջ ամփոփված գերբնական էակների նկատմամբ հավատը կոչվում է. 0,5 մ.  
ա/ տոտեմապաշտություն բ/ ոգեպաշտություն  
գ/ առարկայապաշտություն դ/ հմայապաշտություն
6. Քանի՞ զինվոր ուներ Մեծ Հայքի թագավորության բանակը Տիգրան 2-րդ Մեծի օրոք. 0,5 մ.  
ա/ 48 հազար բ/ 180 հազար  
գ/ 300 հազար դ/ 500 հազար
7. Ո՞ր քաղաքն էր Հայոց արքա Սանատրուկի կառուցած աթոռանիստը. 0,5 մ.  
ա/ Մծքին բ/ Մծուրք  
գ/ Արտաշատ դ/ Մուշ
8. Մեծ Հայքի ո՞ր աշխարհին է համապատասխանել միջագետքյան աղբյուրներում հիշատակվող Կուտիական երկիրը. 0,5 մ.  
ա/ Կորդուք բ/ Գուգարք  
գ/ Ուտիք դ/ Աղձնիք
9. Ե՛րբ է մահացել Հայոց արքա Տիգրան Երվանդյանը. 0,5 մ.

---

10. Ո՞րն է եղել Ատրպատականի մայրաքաղաքը, որի պարիսպների տակ Անտոնիոսի բանակը տվել է 20 հազար սպանված.

0,5 մ.

---

11. Ո՛վ է «Անաբասիս» աշխատության հեղինակը.

0,5 մ.

---

12. Ո՞ր ամրոցի հերոսական դիմադրությունն է գլխավորել բերդապահ Ադդոնը.

0,5 մ.

13. Դասավորե՛ք ըստ հիմնադրման ճիշտ հաջորդականության.

1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

- ա/ Բագարան
- բ/ Արշամաշատ
- գ/ Տուշպա
- դ/ Մենուախինիլի
- ե/ Սարգուրիխինիլի (Հայկաբերդ, Աստվածաշեն)
- զ/ Սամոսատ
- է/ Արտաշատ
- ը/ Արգիշտիխինիլի

1	2	3	4	5	6	7	8

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Խաչափայտի լեռներ
2. Ծովք լիճ
3. Ծաղկանց լեռներ
4. Ծաղկավետ լեռներ
5. Բյուրակնյան (Սրմանց) լեռներ
6. Հայկական Տավրոս

- ա. Արաքս
- բ. Արածանի
- գ. Արևմտյան Տիգրիս
- դ. Ճորոխ
- ե. Արևմտյան Եփրատ
- զ. Արևելյան Տիգրիս

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Ալեքսանդր Մակեդոնացու զորաբանակներից մեկը՝ Մենոն զորավարի գլխավորությամբ, գրավել է Բարձր Հայքի ոսկու հանքերը, որից հետո Ալեքսանդր Մակեդոնացին այլևս նոր զորք չի ուղարկել Հայաստան:

բ/ Հայաստանը թուլացնելու նպատակով Հռոմը նրանից անջատել է Ատրպատականը և այնտեղ թագավոր կարգել իր կամակատար Արիոբարզանեսին:

գ/ Մենուայի առաջին քայլերից մեկն է եղել Եփրատի աջափնյա հատվածում ամրապնդվելը, ուստի նվաճումից հետո այնտեղ հիմնադրել է ռազմավարական հզոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:

դ/ Արտաշատի պայմանագրով պարթևները ոչ միայն չեն ստացել Հյուսիսային Միջագետքն ու Կորդուքը, այլև Պոմպեոսը ճանաչել է Տիգրան Մեծի՝ «արքայից արքա» տիտղոսը:

ե/ Ք. ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկել իր որդեգիր Հուլիոս Կեսարին, որը գահընկեց է արել Տիգրան 4-րդին և թագավոր հռչակել Արտավազդ 4-րդին:

զ/ Արտաշես 1-ինի հանձնարարությամբ՝ զորավար Սմբատ Բագրատունին ջախջախել է վրացական բանակը և Հայաստանին վերադարձրել Վիրքի կողմից զավթված հայկական Գուգարք նահանգը:

է/ Արտավազդ 2-րդը Կրասոսին առաջարկել է պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը զերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:

ը/ Ք. ա. I դարում ապրած հռոմեացի պատմիչ Տակիտոսը հավաստիացնում է, որ մայրաքաղաք Արտաշատի կառուցման տեղն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Հմայապաշտություն – հավատը տոհմի նախորդ սերունդների անդամների ոգիների հրաշագործ զորության նկատմամբ:

բ/ «Նեոլիթյան հեղափոխություն» - տոհմական համայնքների միավորման գործընթացի ավարտը, երբ տոհմերը միավորվում էին ցեղերի մեջ, և մեծանում է ընտանիքի դերը:

գ/ Ավագների խորհուրդ – Վանի թագավորության մեջ արքային կից գործող պետական մարմին, որի անդամները գլխավորում էին արքունի որևէ գործակալություն:

դ/ Գաղափարագրեր – մարդու ստեղծած առաջին գրանշանները, որոնց միջոցով գրանցում էին կուտակված գիտելիքներն ու փոխանցում հետագա սերունդներին:

ե/ «Արքայական գունդ» - Արգիշտի 1-ինի օրոք արհեստավարժ բանակի կազմում առանձնացված ընտիր հետևակազոր:

զ/ Սատրապ – Հայաստանի արևմտյան մասի կառավարչի տիտղոսը Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում:

է/ Ստրատեգոս – Արտաշես 1-ինի ստեղծած վարչամիավորներից յուրաքանչյուրի կառավարչին հունահռոմեական հեղինակների կողմից տրված անվանումը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Ըստ հայ-պոնտական դաշինքի՝ Հայաստանը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում և արևելքում, իսկ Պոնտոսը՝ արևմուտքում:

բ/ Հռոմի դեմ Պարթևստանի պատերազմելու դեպքում Տիգրան Մեծը խոստանում էր օգնական ուժեր տրամադրել Գողթերձ 2-րդին:

գ/ Հռոմի դեմ Տիգրան Մեծի պատերազմելու ամբողջ ընթացքում Միհրդատ Եվպատորը խոստանում էր պահպանել չեզոքություն:

դ/ Արտավազդ 2-րդը օգնական զորքեր չուղարկեց Կրասսին, քանի որ Օրոդես 2-րդի գլխավորած ուժերը հարձակվել էին Հայաստանի վրա:

ե/ Քանի որ հողագավթումների արդյունքում հողագրկված գյուղացին չէր կարողանում հարկ վճարել պետությանը և շահագրգռված չէր զինվորագրվելու բանակին, ուստի Արտաշես 1-ինը ձեռնամուխ եղավ հողային բարեփոխում կատարելուն:

զ/ Համաձայն Արտաշատի պայմանագրի՝ Հայաստանից անջատվելու էին Կորդուքն ու Ծոփքը, որտեղ թագավոր էր հաստատվելու Տիգրան Կրտսերը:

է/ Հայհռոմեական միացյալ բանակից Ոսխայի ճակատամարտում պարտություն կրած Ներսեսը ստիպված էր հաշտություն խնդրել և տարածքներ զիջել Հյուսիսային Միջագետքում:

ը/ Հայաստանով անցնող միջազգային առևտրի ուղիները բարեկարգելու և Գառնի ամրոցը վերականգնելու համար Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տրամադրում:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.

*Կոմմագենեի Նեմրուֆ լեռան սրբավայրը կառուցած Անտիոքոս 1-ինը թագավոր է հռչակվել Ք. ա. 80 թ.՝ Տիգրան Մեծի կողմից թագադրվելով «Տիգրանյան» կամ «Հայկական» թագով:*

Ողղում. ոչ թե՛ \_\_\_\_\_ (նշե՛ք սխալը, 0,5 մ.),

այլ՝ \_\_\_\_\_ (նշե՛ք ճիշտը, 0,5 մ.):

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

*«Արտաշատ քաղաքում հայոց մեծամեծների հավանությամբ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ նրա գլխին դրվեց թագավորական զարդանշանը: Մնացածները, հարգանք մատուցելով թագավորին, ողջունում էին՝ Արտաշես անվանելով»:*

ա. Ե՞րբ է տեղի ունեցել նկարագրված իրադարձությունը:

բ. Ո՞ր երկրի արքայորդին էր Հայոց այդ թագավորը:

գ. Ո՞վ է հաջորդել նրան Հայոց գահին:

**բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)**

1. Ո՞ր մայրաքաղաքն են հիմնադրել Եգիպտոսը նվաճած հիքսոսները. 0,5 մ.  
 ա/ Թեբե բ/ Հերակլեոպոլիս  
 գ/ Մեմֆիս դ/ Ավարիս
2. Ե՞րբ է հիմնադրվել Միտաննիի թագավորությունը. 0,5 մ.  
 ա/ Ք. ա. XVI դ. բ/ Ք. ա. XVIII դ.  
 գ/ Ք. ա. XIV դ. դ/ Ք. ա. XIII դ.
3. Ե՞րբ է ստեղծվել ինկվիզիցիան. 0,5 մ.  
 ա/ 1215 թ. բ/ 1122 թ.  
 գ/ 1209 թ. դ/ 1291 թ.
4. Ք. ա. 612 թ. ո՞ր պետությունն է դադարել գոյություն ունենալուց. 0,5 մ.  
 ա/ Բաբելոնիա բ/ Իսրայել  
 գ/ Ասորեստան դ/ Մարաստան
5. Ի՞նչ էր կոչվում այն հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում սենյորը վասալին էր հանձնում ավատը. 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Սպարտայի գերագույն օրենսդիր մարմինը
  2. Աթենական պետության գերագույն օրենսդիր մարմինը
  3. Հռոմի գերագույն օրենսդիր մարմինը
  4. Հին Հայաստանում կարևոր հարցեր քննարկող բարձրագույն խորհրդակցական մարմինը
- ա. աշխարհաժողով բ. ապելլա գ. էկլեսիա դ. կոմիցիաներ

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)  
 ա/ Ք. ա. 535 թ. Կյուրոս 2-րդ Մեծը պարտության մատնեց Մարաստանին և գրավեց նրա մայրաքաղաք Պերսեպոլիսը:  
 բ/ Հնդկաստանը նվաճած արիացիները վերացրել են գոյություն ունեցող կաստայական հասարակությունն ու հռչակել իրավահավասարություն:  
 գ/ Դեպի Արևելք Հռոմի ներթափանցման հետևանքով առաջացել են կենտրոնացված ուժեղ արքայական իշխանությամբ և քաղաքների ինքնավարությամբ աչքի ընկնող պետություններ:  
 դ/ Կայսերական իշխանության սոցիալական հենարանը մեծացնելու նպատակով Կլավդիոս կայսրը պրովինցիաների հազարավոր բնակիչների հոռմեական քաղաքացիություն է շնորհել:  
 ե/ Պարթևական տերությունը քաղաքակրթական տարբեր աստիճանների վրա գտնվող երկրների միություն էր, որի առավել զարգացած շրջանը արևմուտքն էր:  
 զ/ 751 թ. Սուասոն քաղաքում Պիպին Կարճահասակի թագավոր հռչակմամբ Ֆրանկական պետության մեջ իշխանությունն անցել է Կարոլինգներին:  
 է/ Քրիստոնեության մշակած պատմական նյութի շարադրման նոր ժանրի՝ վարքագրության հիմնադիրն է Պրոկոպիոս Կեսարացին:  
 ը/ Միաստվածության իրանական տարբերակը զրադաշտականությունն է, որը ծագել է Ք. ա. II հազարամյակում՝ հիմքում ունենալով հոգու վերամարմնավորման գաղափարը:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի  
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,  
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

08.02.2021 թ.